Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N1

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԺԱՄԸ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին

Խորհրդի նախագահ՝

Կ. Ճշմարիտյան — ՀՀ էկոնոմիկայի նախարար

Խորհրդի անդամներ՝

Գ. Մելքոնյան — ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ

Կ. Իսախանյան — ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ

Վ. Միրումյան — ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Մ. Այվազյան — ՀՀ արդարադատության նախարարի խորհրդատու

Մ. Հակոբյան — «Սպառողների ազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ

Ա. Մկրտչյան — «Հայաստանի ոսկեգործների և ադամանդագործների ասոցիացիա» հասարակական կազմակերպության գլխավոր խորհրդական

Կ. Միրզաբեկյան — «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամից, տեխնիկական գիտությունների թեկնածու,դոցենտ

Մասնակիցներ՝

Հ. Այվազյան — Տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար

Տ. Հակոբյան — Տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ

Ա. Ասոյան — Տեսչական բարեփոխումների խմբի փորձագետ

Գ. Պողոսյան	ՎԶԵԲ գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Ս. Ծատուրյան	ՎԶԵԲ գործարարության աջակցման գրասենյակի իրավաբան
Արտակ Շահբազյան	«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ, փոխտնօրեն

1. ՀՀ վարչապետին՝ Արտակ Մարտինի Շահբազյանի թեկնածությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում ներկայացման վերաբերյալ

(Կ. Ճշմարիտյան)

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ պարոն Կ. Ճշմարիտյանը:

Խորհրդի անդամները խնդրեցին Արտակ Շահբազյանին ներկայացնել տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակների և այդ նպատակներին հասնելու քայլերի իր տեսլականը, այնուհետև քննարկումը շարունակվեց հարցուպատասխանի ձևաչափով:

Քննարկումներից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ քվեարկեց՝ 8 խորհրդի անդամ

Դեմ քվեարկեց՝ 0 խորհրդի անդամ

Որոշվեց՝

1) Խորհրդի նիստի 1-ին հարցն ընդունել և Արտակ Շահբազյանի թեկնածությունը առաջարկել ՀՀ վարչապետին տեսչական մարմնի ղեկավար նշանակելու նպատակով:

2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջեի, կառուցվածքի, տեսչական մարմնի բնականոն գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ներկայացում և քննարկում

(Հ. Այվազյան,)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար Հայկ Այվազյանը:

Ներկայացվեցին «Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի» գործունեությունը կարգավորող հիմնական օրենսդրական ակտերը:

Որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն

3. Խորհրդի հետագա աշխատանքների և կազմակերպչական հարցերի, այդ թվում՝ խորհրդի նիստերի անցկացման պարբերականության քննարկում

(Հ. Այվազյան)

Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար Հայկ Այվազյանը:

Առաջարկվեց նիստերի անցկացման պարբերականությունը սահմանել 3 ամիսը մեկ անգամ՝ համաձայն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի:

Քննարկումներից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ քվեարկեց՝ 8 խորհրդի անդամ

Դեմ քվեարկեց՝ 0 խորհրդի անդամ

Որոշվեց՝

նիստերի անցկացման պարբերականությունը սահմանել 3 ամիսը մեկ անգամ՝ համաձայն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի:

4. ՀՀ վարչապետին՝ Հայկ Վիտյայի Այվազյանի թեկնածությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնում ներկայացման վերաբերյալ

(Կ. Ճշմարիտյան)

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ պարոն Կ. Ճշմարիտյանը:

Խորհրդի անդամները խնդրեցին Հայկ Այվազյանին ներկայացնել տեսչական մարմնի գործունեության հիմնական նպատակների և այդ նպատակներին հասնելու քայլերի բնույթի և հաջորդականության իր տեսլականը, ինչպես նաև առկա խնդիրների լուծման համար անհրաժեշտ քայլերը: Այնուհետև քննարկումը շարունակվեց հարցուպատասխանի ձևաչափով:

Քննարկումներից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ քվեարկեց՝ 8 խորհրդի անդամ

Դեմ քվեարկեց՝ 0 խորհրդի անդամ

Որոշվեց՝

1) Խորհրդի նիստի 4-րդ հարցն ընդունել և Հայկ Այվազյանի թեկնածությունը առաջարկել ՀՀ վարչապետին տեսչական մարմնի ղեկավար նշանակելու նպատակով:

Խորհրդի նախագահ,

ՀՀ էկոնոմիկայի նախարար Կ. Ճշմարիտյան

Խորհրդի անդամներ՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Գ. Մելքոնյան

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ
իրավիճակների նախարարի տեղակալ Կ. Իսախանյան

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Միրումյան

ՀՀ արդարադատության նախարարի խորհրդատու Մ. Այվազյան

«Սպառողների ազգային ասոցիացիա» հասարակական
կազմակերպության նախագահ Մ. Հակոբյան

«Հայաստանի ոսկեգործների և ադամանդագործների
ասոցիացիա» հասարակական կազմակերպության
գլխավոր խորհրդական Ա. Մկրտչյան

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան»
հիմնադրամ,
տեխնիկական գիտությունների թեկնածու,դոցենտ Կ.Միրզաբեկյան